

S.G. MANTASHYAN

ARMENIA IN THE CONTEXT OF SOCIOLOGICAL STUDY OF  
CONFLICTS

The issues related to the experience of sociological research on conflicts are considered.

**Keywords:** conflict, social conflict, social and labor conflict, labor conflict, corporate culture.

ՀՏԴ 314.156.2«713»(479.24)

L.A. ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԽՍՀՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԱՐՑԱԽԻ  
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ

1980-ականների վերջերին, օգտվելով «վերակառուցման» քաղաքականության ըն-  
ձեռած հնարավորություններից, ոգեշնչված «հրապարակայնացում» կարգախոսից, ԼՂԻՄ-ի  
հայ բնակչությունը դիմեց Ադրբեջանի, Հայաստանի, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝  
Արցախի հարցի արդարացի լուծման խնդրանքով: Արցախի ժողովրդին լռեցնելու, նրա  
անվտանգ ապրելու ինքնորոշման իրավունքը գերեզմանելու միտումով՝ Ադրբեջանի իշ-  
խանությունները, ԽՍՀՄ ղեկավարության թողտվությամբ, իրականացրին հայերի զանգ-  
վածային ջարդեր: ԽՍՀՄ փլուզման արդյունքում Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր ան-  
կախությունը: Էթնիկ զտումների և բռնի տեղահանությունների արդյունքում Արցախն ամ-  
բողջապես հայաթափվեց: Ադրբեջանի գործողություններն Արցախի ժողովրդի դեմ ցե-  
ղասպանություն է, որը դեռևս չի ստացել միջազգային իրավական գնահատական: Խնդրո  
առարկա թեմայի շրջանակում մեր կողմից հետազոտվել և լուսաբանվել են Ադրբեջանի  
վարած հայերի էթնիկ զտման քաղաքականությունն արտացոլող անհերքելի փաստերը:

**Առանցքային բաներ.** Արցախ, էթնիկ զտում, «վերակառուցում», հայերի ջարդեր,  
պատերազմ:

**Ներածություն.** ԽՍՀՄ վերջին տարիներին ԽՄԿԿ բարեփոխումները՝  
Գորբաչովի որդեգրած «վերակառուցման» քաղաքականությունը, ԽՍՀՄ ազգային  
հիմնահարցերը ժողովրդական ճանապարհով լուծելու մեծ հույսեր և հնարավո-  
րություններ էին ստեղծել: Սակայն, ինչպես հետո պարզվեց, ԽՍՀՄ ղեկավա-  
րության որդեգրած ժողովրդական բարեփոխումների թեզերը կեղծ էին: Մ.  
Գորբաչովը ձգտում էր վերակենդանացնել փլուզվող միությունը, քայլեր էր ձեռ-  
նարկում՝ կնքելու հանրապետությունների սուվերենության ստատուսի բարձրաց-  
ման միջոցով միութենական նոր դաշնագիր: ԽՍՀՄ-ում մեծ ոգևորությամբ

ընդունվեց «վերակառուցման» քաղաքականությունը, մանավանդ որ պետք է բարեփոխվեին կյանքի բոլոր բնագավառները: Հանրապետությունների սահմանների անարդարացիորեն վերաձևումների արդյունքում ազգային հարցը մշտապես բարձրացվել է ԽՍՀՄ ողջ գոյության ընթացքում, և հատկապես 1980-ականների վերջերին ազգերի արդարացի բողոքի ձայնն ավելի լսելի դարձավ, քանզի ԽՄԿԿ բարեփոխումների կարևորագույն բաղադրիչներից էր «հրապարակայնության» ապահովումը:

Ադրբեջանը մշտապես իրականացրել է իր կազմում գտնվող տեղաբնիկ ազգերի, այդ թվում՝ հայերի ոչնչացման քաղաքականություն:

**Հայերի էթնիկ գտման՝ Ադրբեջանի քաղաքականությունը ԽՍՀՄ վերջին տարիներին.** Ադրբեջանի կողմից հայերի ոչնչացման քաղաքականության մասին են վկայում Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարների տվյալները: Նախիջևանի ամբողջությամբ հայաթափումից հետո՝ հաջորդ թիրախը ԼՂԻՄ-ն էր: Այսպես՝ ըստ ԽՍՀՄ մարդահամարի տվյալների՝ 1926թ. թյուրքերը (ներկայիս ադրբեջանցիները) կազմում էին Ադրբեջանական ԽՍՀ-ի բնակչության **62,13%-ը**, իսկ հայերը՝ **12,18 %-ը**: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը **125,3** հազար էր, որից միայն **12,592** (10,06%) էին թյուրքերը (ներկայիս ադրբեջանցիները), իսկ **111,694-ը** հայերն էին (89,15 %) [1]:

**1989 թ.** մարդահամարի տվյալներով Ադրբեջանում բնակչությունը կազմում էր 7.021.178 մարդ, որից 5.804.980 ադրբեջանցիներն էին (**82,68%**), հայերի թիվը նվազել էր՝ կազմելով Ադրբեջանի բնակչության 5,56%-ը [2]: Դրա մեջ ներառված չէր ԼՂԻՄ-ի մարդահամարը:

Խորհրդային ողջ տարիներին Ադրբեջանն իրականացնում էր հայերի հանդեպ բռնություններ, որի նպատակը վախի մթնոլորտի ձևավորումն էր, որպեսզի հայ բնակչությունը կամավոր լքեր իր հազարամյակների բնօրրանը: Ղարաբաղում պարբերաբար տեղի էին ունենում հայերի սպանություններ՝ հատկապես ԼՂ Մարտունու շրջանում 1966-1967թթ.: Վերջինիս համար առիթ էր հանդիսացել այն, որ ԼՂ ժողովուրդը 1965թ. դիմել էր ԽՍՀՄ ղեկավարությանը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանին միացնելու խնդրանքով: 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում արցախահայերի անվտանգ ապրելու իրավունքն իրացնելուն ի պատասխան՝ ադրբեջանցիները կենտրոնական և տեղական իշխանությունների թողտվությամբ կազմակերպեցին հայերի ջարդեր Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում (Գանձակում), Մինգեչաուրում և այլուր: Սումգայիթ քաղաքն ուներ 200 հազար բնակչություն, որից 18 հազարը հայեր էին: Պաշտոնական տվյալներով 32 հայ էր սպանվել, շատերի կարծիքով՝ 350-600 թվաքանակ էր նշվում: Սումգայիթում հայերի ջարդերի դատավարությունն

անցկացվում էր դռնփակ [3, էջ 13-15]: 1988թ. Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված բռնությունների և ոճրագործության դատավարության ընթացքի վերաբերյալ այդ ամիսներին «Московские новости» թերթում հատուկ թղթակից Վիկտոր Լոշակը հաղորդում է տեղեկություններ. մասնավորապես, ԽՍՀՄ դատախազությունն այդ կապակցությամբ Սումգայիթում կենտրոնացրել էր հարյուրավոր քրեագետների և քննիչների, աշխատում էին մոսկովյան բժշկական էքսպերտներ: Առողջապահության քաղաքային բաժանմունքի ղեկավար Վազիֆ Կադրամանովը հաղորդում էր, որ հայերին, քանի որ կյանքի սպառնալիք կար, էվակուացրել էին մշակույթի տանը: Թերթի հաղորդմամբ՝ Սումգայիթի դատախազ Իսմեթ Գաիբովը ձերբակալման սանկցիա էր արդեն տվել 60 հոգու: Ի. Գաիբովը նշել է. «Չեմ կարող հավատալ, որ գազան-հանցագործներին ադրբեջանցի մայր է ծնել...» [4]: «ИЗВЕСТИЯ» թերթին տված հարցազրույցում ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Կատուսևը նշում է, որ, անկասկած, Սումգայիթում տեղի ունեցածը կապված է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի հետ, և հաստատված է, որ խուլիգանական տարրեր են գործել [5]:

ԼՂԻՄ-ում և Ադրբեջանի այլ վայրերում հայերի հանդեպ բռնություններն իրականացվում էին ԽՍՀՄ ղեկավարության և ադրբեջանական տեղական պաշտոնյաների թողտվությամբ՝ ստեղծելով անպատժելիության և վախի մթնոլորտ, որպեսզի ԽՍՀՄ ժողովուրդները չբարձրաձայնեին իրենց ազգային հիմնախնդիրները, որը կարող էր դռնփակի էֆեկտով հանգեցնել Միության փլուզմանը: Սակայն հենց այդ հիմնախնդիրների արդարացի լուծումից խուսափելը և ազգերին բռնությամբ լռեցնելն ավելի արագացրին Միության փլուզումը:

1988թ. հուլիսին Եվրոպական պառլամենտը, անհանգստացած ԽՍՀՄ-ում հայերի հայնդեպ կատարվող բռնություններից, ընդունեց բանաձև՝ «Խորհրդային Հայաստանի դրության մասին»: Նկատի առնելով, որ ԼՂԻՄ-ի (որի 80%-ը հայեր էին) պատմական կարգավիճակը՝ որպես Հայաստանի մաս, կամայական որոշմամբ էր ներառված Ադրբեջանի կազմում 1923թ., ինչպես նաև հայերի զանգվածային ջարդերը ադրբեջանական Սուգայիթ քաղաքում, որ տեղի էին ունեցել 1988թ. փետրվարին, դատապարտում էր հայերի հանդեպ բռնությունները Ադրբեջանի տարածքում, պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պահանջը՝ վերամիավորելու Խորհրդային Հայաստանի հետ: Եվրախորհրդարանը կոչ է արել նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ուսումնասիրել փոխզիջումային առաջարկները հայ պատվիրակների, ովքեր առաջարկում էին Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես մտցնել Մոսկվայի կենտրոնական վարչակազմի ղեկավարության ներքո, Ղարաբաղը ժամանակավորապես միացնել ՌԽՖՍՀ-ին կամ փոխանցել տարածաշրջանային վարչակազմի նախագահության իրավա-

սության ներքո: 1989թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատի թիվ 178 բանաձևում ևս ընդգծվում էր ԱՄՆ վերաբերմունքը ԼՂ հիմնախնդրին: Մասնավորապես՝ բանաձևում հայտարարվեց աջակցություն՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդար լուծմանը, հաշվի առնելով այն փաստը, որ 80% հայկական մեծամասնությունն ունի ինքնորոշման և ազատության իրավունք [6, էջ 15-16]:

Բաքվում 1990թ. հունվարին հայերի ջարդերը կազմակերպելու կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի՝ 1990թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ դռնփակ լիագումար նիստում ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը պատասխանում է ակադեմիկոս Աբասովի այն մեղադրանքներին, որ ԽՍՀՄ զորքերը մտել են Բաքու գիշերը՝ մթության քողի տակ, հանկարծակի: Մասնավորապես՝ Դ. Յազովը նշում է, որ մի ամբողջ շաբաթ շարունակ ամրություններ էին պատրաստվում՝ մի դեպքում մինչև 200 կմ երկարությամբ, մի այլ դեպքում՝ մինչև 60 կմ, ոչ թե ինչ-որ թափոններից էին այդ ամրությունները կառուցվում, այլ նոր «Կրազներով», «Կամազներով», դրանց արանքում պարտադիր կերպով բենզատար մեքենաներ էին դնում: Դրան եռակցվում, ամրացվում էին, պատրաստվել էին հրկիզող խառնուրդով շերտ, և այդ ամենը պահպանվում էր գրոհայինների կողմից: Ամեն մի բարիկադում 70-ից մինչև 700 մարդ էր գտնվում: Դ. Յազովը հոետորական հարց է ուղղում՝ մի՞թե դա հանկարծակիություն էր: Դ. Յազովի ելույթի ընթացքում ադրբեջանցի պատգամավորները սկսում են դուրս գալ դահլիճից: Նիստում նշում է նաև ադրբեջանական սադրանքների մասին, որ թաղել էին 49 մարդ, փորել 150 գերեզման, որպեսզի ինչ-որ ձևով պատասխանատվությունից խուսափեն իրենց սեփական ժողովրդի առաջ, մեղքը գցեն Կենտրոնի վրա: Դ. Յազովն իր ելույթում նշում է, որ պետք է դատապարտել ազգայնականությունը՝ որպես երևույթ՝ շեշտելով, որ վերջիվերջո հարկավոր է սահմանել այն կարգավիճակը, որ պետք է ունենա Լեռնային Ղարաբաղը [7]: ԽՍՀՄ ղեկավարությունը զորքը մտցրեց և Բաքվում հայերի մեկշաբաթյա սպանող դադարեցրեց միայն այն ժամանակ, երբ անպատժելիության զգացումով առաջնորդվող ադրբեջանական խաժամուժը սկսեց բռնություններ իրականացնել նաև քաղաքի սլավոն բնակչության հանդեպ:

Խորհրդային Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի դրության, շրջափակման, ջարդերի և մարդու իրավունքների վերաբերյալ Եվրախորհուրդը դեռևս 1988-1991 թթ. ընդունել է մի շարք բանաձևեր: Մասնավորապես՝ 1988թ. հուլիսի 7-ի [8], 1990թ. հունվարի 18-ի [9] և 1991թ. մարտի 14-ի [10] բանաձևերում ուշադրություն էր հրավիրում այն փաստին, որ Լեռնային Ղարաբաղը, որի բնակչության 80 տոկոսը հայեր են, Ադրբեջանի կազմ է մտցվել 1923թ.-ին,

դատապարտում է Սումգայիթի և Բաքվի հայության ջարդերը, հայերի զանգվածային տեղահանությունը, 300 հազար հայ փախստականների դրությունը Սումգայիթ և Բաքու քաղաքներից: Նշվում էր նաև, որ երկրաշարժը և հայերի ջարդերն Ադրբեջանում ի հայտ են բերել 500 հազար հայերի ծանր դրությունը, Հայաստանի շրջափակման, էլեկտրաէներգիայի և գազի տագնապը, որից տառապում է Հայաստանը շրջափակման պատճառով, Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի և Գետաշենի վրա հարձակումները, Ադրբեջանում, հատկապես Սումգայիթում և Կիրովաբադում հայերի ջարդերը: Եվրախորհուրդը կոչ էր անում ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին անհապաղ որոշումներ ընդունել, որոնց կհաջորդեն գործնական քայլեր, որոնք ի զորու կլինեն ամբողջականորեն և վերջնականորեն դադարեցնելու շրջափակման դրությունը Հայաստանում և Ղարաբաղում, ինչպես նաև հարվածները՝ Ղարաբաղի և մերձակա շրջանների հայ բնակչության հանդեպ, որին կարծես փորձում են բռնի ուժով տեղահանել: Միաժամանակ, Եվրապառլամենտը որոշման մեջ կոչ է ուղղում Մ. Գորբաչովին, որպեսզի վերականգնեն Լեռնային Ղարաբաղի օրինական և սահմանադրական իշխանությունները՝ իրենց իրավունքների մեջ [11]:

Լեռնային Ղարաբաղում ԽՍՀՄ ղեկավարության բարձր հովանու ներքո 1991թ. ապրիլի 30-ից սկսվեց «Օղակ» գործողությունը: ԽՍՀՄ ներքին զորքերի և ադրբեջանական հատուկ ջոկատայինների կողմից օղակի մեջ վերցվեցին Արցախի բնակավայրերը: Գետաշենից և Մարտունաշենից հայ բնակչությանը ստիպեցին լքել իրենց բնակավայրերը: Մինչև 1991թ. աշուն ձգված «Օղակ» գործողության հետևանքով Լեռնային Ղարաբաղի իրենց հայրենի բնակավայրերից՝ Խանլարի, Շահումյանի, Մարտակերտի, Շուշիի, Հաղրուֆի շրջանների տասնյակ գյուղերից բռնի տեղահանվեց հայ բնակչությունը [12, էջ 68-69]:

1991-ից Ադրբեջանն սկսեց լայնածավալ պատերազմ՝ գոյության սպառնալիք ստեղծելով ոչ միայն ԼՂԻՄ-ի, այլև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի համար: Ստեղծված պայմաններում ԼՂ բնակչությունն օգտվեց անվտանգության երաշխավորված մեխանիզմներ ստեղծելու ազգերի ինքնորոշման իրավունքից և 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց իր անկախությունը: Հայաստանը և հայ ժողովուրդը սատար կանգնեց ԼՂՀ-ին և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը, որն ամրագրվեց ՀՀ ԳԽ 1992թ. հուլիսի 8-ի համապատասխան որոշմամբ՝ պարտավորվելով չստորագրել որևէ ներպետական կամ միջազգային փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն նշված կլինի Ադրբեջանի կազմում [13, թթ. 2-3]:

**Արցախի շրջափակումը և ամբողջական հայաթափումը.** Ադրբեջանն Արցախի դեմ սանձազերծած երկու պատերազմներում էլ (1991-1994թթ. և 2016թ. Քառօրյա) պարտության հետ չհաշտվելով՝ շարունակեց ժամանակակից

սպառազինությունների մեծ պաշար կուտակել, միջազգային ասպարեզում ամրապնդեց իր դիրքերը, Թուրքիայի և մյուս դաշնակիցների աջակցությամբ 2020թ. 44-օրյա պատերազմով ռազմակալեց Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը: 2022թ. դեկտեմբերի 12-ից Արցախը ամբողջությամբ ենթարկվեց Ադրբեջանի կողմից շրջափակման: Լաչինի (Բերձորի) միջանցքը, 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության համաձայն [14], ՌԴ խաղաղապահ առաքելության վերահսկողության ներքո էր և պետք է ապահովեր ՀՀ հետ ցամաքային անխափան և անվտանգ կապը: Սակայն խաղաղապահների անմիջական թողվության և անգործության պայմաններում Արցախի ժողովուրդն ընկավ 9-ամսյա շրջափակման մեջ՝ զրկված լինելով սննդից և բոլոր տեսակի առաջին անհրաժեշտության ապրանքներից, գազից և էլեկտրաէներգիայից: ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը բավարարեց Հայաստանի խնդրանքը և գտավ, որ 2022 թ. դեկտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապը Լաչինի միջանցքով խաթարվել է: Մասնավորապես՝ 2023թ. փետրվարի 22-ին հրապարակեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի և հայելային կերպով Ադրբեջանի կողմից ներկայացված ժամանակավոր միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը [15], որը վերահաստատեց 2023թ. հուլիսի 6-ի որոշմամբ: Դրանում կոչ էր արվում Ադրբեջանին «Ձեռնարկել իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցները՝ ապահովելու Լաչինի միջանցքով մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անխափան տեղաշարժը երկու ուղղություններով»: Նաև ընդգծվեց, որ Լաչինի միջանցքում ադրբեջանական անցակետի առկայությունն ու շահագործումը իրավամբ ռասայական խտրականություն է [16]: Այս ամենն անտեսելով՝ Ադրբեջանը 2023թ. սեպտեմբերի 19-ին լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության դեմ: Անհավասար մարտերում տալով մի քանի հարյուր զոհեր՝ Արցախի ժողովուրդը ստիպված ընդունեց Ադրբեջանի վերջնագրերը և ամբողջովին բռնի գաղթեցվեց իր հազարամյակների բնօրրանից: Ադրբեջանը ռուս խաղաղապահների հետ ջանասիրաբար միայն Արցախը լքելու դեպքում հայերի առաջ բացեց Լաչինի միջանցքը, և ողջ ժողովուրդը մազապուրծ՝ մոտավորապես 120 հազ. մարդ, հասավ Հայաստանի Հանրապետության սահմաններին:

**Եզրակացություն.** Նախկին ԼՂԻՄ-ի հայ ժողովուրդն իրացրել է անկախ և անվտանգ ապրելու իր միջազգային իրավունքը, ինչպես անկախություն կերտած աշխարհի բոլոր ժողովուրդները: Ադրբեջանի հայատյաց և էթնիկ գտման քաղաքականությունը սպառնալիք է ողջ հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության համար: Ադրբեջանի ցեղասպան գործողությունները հայերի հանդեպ

Սումգայիթում, Բաքվում և այլ հայաշատ քաղաքներում, Արցախում չեն ստացել միջազգային պատշաճ արձագանք և իրավական գնահատական, որի դեպքում միայն ապագայում կկանխվեն մարդկության դեմ ուղղված հերթական հանցագործությունների փորձերը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Национальный состав населения по регионам республик СССР, Закавказская СФСР / АО Нагорного Карабаха,  
[http://www.demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_26.php?reg=2304](http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_26.php?reg=2304), 03.03.23:
2. Всесоюзная перепись населения 1989 года  
[http://www.demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_89.php](http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php)
3. **Бальян Г.** Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека.- Ереван, 1991.-73 с.
4. «Московские новости», №16, 17 апреля, 1988г.
5. «Известия», 20 августа 1988 г.
6. **Авакян Ш.** Нагорный Карабах. Правовые аспекты.- Ереван, 2014.-104 с.
7. «Ավանգարդ», 7 մարտի 1990թ.:
8. [http://www.nkr.am/sites/default/files/1988\\_07\\_07\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_the\\_situation\\_in\\_soviet\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1988_07_07_european_parliament_resolution_on_the_situation_in_soviet_armenia.pdf) //Official journal of the European Communities, № С 235/106, 12.9.88: 7 July, 1988, Joint resolution replacing Docs. B2-538 and 587/88:
9. [http://www.nkr.am/sites/default/files/euoparl\\_resolution\\_on\\_situation\\_in\\_armenia\\_18-01-1990.pdf](http://www.nkr.am/sites/default/files/euoparl_resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf) //Official journal of the European Communities, № С 38/81, 19.2.90: 18 January, 1990, Joint resolution replacing Docs. B2-538 and 587/88:
10. [http://www.nkr.am/sites/default/files/1991\\_03\\_14\\_Euoparl\\_Resolution\\_on\\_blockade\\_of\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_Euoparl_Resolution_on_blockade_of_armenia.pdf) //Official journal of the European Communities, № С 106/121, 22.4.91: 14 Mars, 1991, (g) B30473/91: Տե՛ս նաև Ազատամարտ, 15 մարտի 1991թ.:
11. [http://www.nkr.am/sites/default/files/1991\\_03\\_14\\_Euoparl\\_Resolution\\_on\\_blockade\\_of\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_Euoparl_Resolution_on_blockade_of_armenia.pdf) //Official journal of the European Communities, № С 106/121, 22.4.91: 14 Mars, 1991, (g) B30473/91: Տե՛ս նաև Ազատամարտ, 15 մարտի 1991թ.:
12. **Манасян А.** Карабахский конфликт: Ключевые понятия и хроника. — Ер.: НОФ “Нораванк”, 2005. [http://www.noravank.am/upload/pdf/37\\_ru.pdf](http://www.noravank.am/upload/pdf/37_ru.pdf)
13. ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 8, թթ. 2-3:
14. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>
15. Letter dated 22 February 2023 from the Permanent Representative of Armenia to the United Nations addressed to the Secretary-General  
<https://documents.un.org/doc/undoc/gen/n23/057/43/pdf/n2305743.pdf>
16. ԱԳՆ հայտարարությունն Արդարադատության միջազգային դատարանի հուլիսի 6-ի որոշման վերաբերյալ  
[https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/07/11/mfa\\_statement\\_icj/12081](https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/07/11/mfa_statement_icj/12081)

**Л.А. МАКАРЯН**

**БЕЗНАКАЗАННОСТЬ НАСИЛИЯ В ОТНОШЕНИИ АРМЯН В  
СОВЕТСКОМ АЗЕРБАЙДЖАНЕ В ПОСЛЕДНИЕ ГОДЫ СССР.  
ПОЛНАЯ ЭТНИЧЕСКАЯ ЧИСТКА АРМЯН В АРЦАХЕ**

В конце 1980-х годов, воспользовавшись возможностями, предоставленными политикой «Перестройки», и вдохновившись лозунгом «Гласность», армянское население Нагорно-Карабахской автономной области обратилось к Верховным Советам Азербайджана, Армении и СССР с просьбой справедливого решения арцахского вопроса. Чтобы заставить народ Арцаха замолчать и похоронить их право на самоопределение для безопасной жизни, власти Азербайджана при попустительстве руководства СССР организовали массовые убийства армян. После распада СССР Нагорный Карабах провозгласил свою независимость. В результате этнических чисток и насильственных депортаций Арцах полностью обезлюдел. Действия Азербайджана против народа Арцаха являются актом геноцида, который до сих пор не получил международно-правовой оценки. В рамках обсуждаемой темы исследованы и освещены неопровержимые факты политики этнических чисток армян, проводимой Азербайджаном.

*Ключевые слова:* Арцах, этническая чистка, «Перестройка», резня армян, война.

**L.A. MAKARYAN**

**IMPUNITY FOR VIOLENCE AGAINST ARMENIANS IN SOVIET  
AZERBAIJAN DURING THE FINAL YEARS OF THE USSR.  
THE COMPLETE ETHNIC CLEANSING OF ARMENIANS FROM  
ARTSAKH**

In the late 1980s, taking advantage of the opportunities offered by the “Perestroika” policy and inspired by the slogan “Publicization” the Armenian population of the Nagorno-Karabakh Autonomous Region (NKAO) appealed to the Supreme Councils of Azerbaijan, Armenia, and the USSR, requesting a fair resolution to the Artsakh issue. Seeking to silence the people of Artsakh and bury their right to self-determination to live safely, the Azerbaijani authorities, with the tacit approval of the USSR leadership, carried out mass killings of Armenians. Following the collapse of the USSR, Nagorno-Karabakh declared its independence. As a result of ethnic cleansing and forced deportations, Artsakh was entirely depopulated of Armenians. Azerbaijan's actions against the people of Artsakh constitute genocide, which has yet to receive international legal recognition. Within the scope of this topic, we have researched and highlighted undeniable facts that reflect Azerbaijan’s policy of ethnic cleansing against Armenians.

*Keywords:* Artsakh, ethnic cleansing, "Reconstruction", massacres of Armenians, war.